



Գաղտնիության Կիրառման Ծանուցում

Այս ծանուցումը նկարագրում է, թե ինչպես ձեր մասին բժշկական եւ հոգեկան առողջության տեղեկությունը կարող է օգտագործվել, բացահայտվել, եւ թե ինչպես ձեռք բերել տեղեկատվության մատչելիությունը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՍ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇԱԴԻՐ ՎԵՐԱՆԱՅԵԼ:

1996-ին Կոնգրեսն ընդունել է HIPAA օրենքը, որը հանդես է գալիս որպես Առողջության Ապահովագրման Դյուրատարության եւ Հաշվետվողականության Ակտ: Այս դաշնային օրենքով, մշակվել են ստանդարտներ, անհատի առողջության տեղեկությունները պաշտպանելու համար: Այդ ստանդարտները, ավելի հայտնի են որպես «Գաղտնիության Կանոնը», ուժի մեջ են մտել Երկուշաբթի, Ապրիլ 14, 2003թ.

Կան մի քանի կարեւոր բաներ HIPAA-ի մասին հիշելու:

- HIPAA-ն չի փոխի ձեր ստացած ծառայությունները:
- HIPAA-ն չի ազդի ձեր ծառայությունների իրավասությանը:

Pacific Clinics-ը նվիրված է պաշտպանել իր ներկա եւ նախկին հաճախորդների առողջության վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը: Մենք ընդունում ենք հաճախորդի բացատրություն ստանալու իրավունքը, այս կազմակերպության կողմից օգտագործվող եւ բացահայտվող Առողջության Պաշտպանված Տեղեկատվության (ՄՊՏ)-ի մասին, որը ձեռք է բերվում բուժում ապահովելով, ստանալով վճարում ծառայությունների համար կամ այլ գործողությունների ժամանակ:

Մենք նաեւ տեղեկացնում ենք Ձեզ մեր իրավական պարտականությունների եւ Ձեր իրավունքների մասին կապված ձեր պաշտպանված առողջության տեղեկության մասին եւ ինչպես իրականացնել դրանք այս կազմակերպության հետ:

Մեր Պարտականությունները Ձեզ

Pacific Clinics-ը օրենքով պարտավոր է պահպանել Ձեր պաշտպանված առողջության տեղեկատվության գաղտնիությունը եւ տրամադրել Ձեզ այս ծանուցումը մեր իրավական պարտականությունների եւ գաղտնիության կիրառման մասին ձեր պաշտպանված առողջության տեղեկությունների նկատմամբ: Պաշտպանված առողջապահական տեղեկատվությունը տեղեկություն է որը ստեղծում եւ վարում է Clinics-ը, որպեսզի մենք կարողանանք ձեզ ապահովել մեր ծառայությունները: Մենք պարտավոր ենք հետեւելու այս ներկայումս ուժի մեջ գտնվող ծանուցմանը, երբ մենք օգտագործում ենք կամ բացահայտում Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները: Pacific Clinics-ը պետք է հետեւի, թե՛ պետական եւ թե՛ դաշնային օրենքը, երբ օգտագործում եւ բացահայտում է ձեր առողջության պաշտպանված տեղեկությունները: Որոշ օրենքներ ապահովում են առավել որակյալ պաշտպանություն հոգեկան առողջության, ալկոհոլի եւ թմրանյութերի չարաշահման, ՄԻԱՎ / ՁԻԱՀ - ի եւ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների տեղեկությունների համար: Այն դեպքերում, երբ պետական եւ դաշնային օրենքները տալիս են նմանատիպ պաշտպանություն, Pacific Clinics-ը ընդհանուր առմամբ հետեւում է այն օրենքին, որը տալիս է առավել որակյալ պաշտպանություն Ձեր իրավունքներին, կամ ձեր առողջության գաղտնիության վերաբերյալ տեղեկություններին:

Pacific Clinics-ը թույլատրված է օգտագործել կամ բացահայտել Ձեր պաշտպանված առողջության վերաբերյալ տեղեկությունները, առանց ձեր թույլտվության, հետեւյալ նպատակների համար՝

Բուժում

Մենք կարող ենք օգտագործել եւ բացահայտել Ձեր պաշտպանված առողջության վերաբերյալ տեղեկությունները այս կազմակերպության շրջանակներում եւ մեր բիզնես գործընկերներին, որոնք ձեզ ապահովում են բուժում եւ այլ ծառայություններ: Մի օգտագործվող բուժման օրինակ կարող է լինել հոգեբուժի խորհրդակցում ձեր գործի կառավարչի հետ Ձեզ համար նախատեսված դեղորայքի համար:

Երբ Pacific Clinics-ը եւ ձեր բուժման այլ մատակարարներ սպասարկում են ձեզ որպես հաճախորդի, մենք կարող ենք նաեւ բացահայտել բավարար տեղեկատվություն

- Բուժելու Ձեզ ծայրահեղ իրավիճակներում
- Ծառայություններ համակարգելու համար
- Ապահովելու անհապաղ անցումային խնամք Pacific Clinics-ը լքելուց հետո:

Բացի այդ, մենք կարող ենք դիմել Ձեզ, ժամադրությունների հիշեցման համար, բուժման այլընտրանքային տեղեկությունների, կամ այլ առողջապահական նպաստների եւ ծառայությունների համար, որոնք կարող են հետաքրքրել Ձեզ:

Վճարում

Մենք կարող ենք օգտագործել եւ բացահայտել Ձեր պաշտպանված առողջության վերաբերյալ տեղեկությունները ձեզ մատուցված ծառայությունների վճարումը ստանալու, այդ թվում՝ վճարման եւ տվյալների մշակման աշխատանքների, որոնք թույլ են տալիս ստանալ դրամական փոխհատուցում ծառայությունների համար: Մի վճարման օգտագործման օրինակն է, երբ Pacific Clinics –ը ապահովում է վճարման պահանջագրեր պետության կամ վարչական տվյալների համակարգերի միջոցով:

Առողջապահական Գործողություններ

Մենք կարող ենք օգտագործել եւ բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները մեր առողջապահական գործողությունների համար, այդ թվում՝ ներքին կառավարման եւ հարակից միջոցառումների համար, որպեսզի բարելավվեն որակը եւ ծախսերի արդյունավետությունը: Մեր գործողությունների օրինակը առողջապահության ծառայությունների վերաբերյալ գործողության կներառվի հանձնաժողովի գործունեության կամ տեղեկատվության ներքին որակի բարելավմանը եւ ծրագրի հաջող արդյունքները օգտագործումը հաստատմելու համար:

Բիզնես Գործակիցներ

Մենք կարող ենք նաեւ կիսվել առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկություններով մեր բիզնես գործընկերների հետ, ովքեր կատարում են բուժում, վճարում, առողջապահության գործողություններ կամ այլ ծառայություններ մեր կողմից: Բիզնես գործընկերները պայմանագրով պարտավոր են պաշտպանել Ձեր առողջության պաշտպանված տեղեկությունները:

Pacific Clinics-ին սահմանված օրենքի կարգով թույլատրվում է կամ կարելի է բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները, առանց Ձեր թույլտվության հետեւյալ նպատակների համար՝

Չարաշահման/Անտեսման Տեղեկատվություն

Եթե մենք ողջամտորեն հավատում ենք որ դուք չարաշահումների կամ անտեսման գոհ եք, ապա մենք կարող ենք բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները պետական իշխանությանը, (ինչպիսին է օրինակ սոցիալական ծառայությունների բաժինը կամ այլ պաշտպանիչ ծառայությունների գործակալությունները) որը օրենքով լիազորված է ստանալ նման հաշվետվություններ: Մենք կարող ենք բացահայտել տեղեկատվություններ համապատասխան մարմիններին, երբ կասկածելի է երեխայի կամ խնամառու չափահասի/տարեցի շահագործումն ու անտեսումը, ինչպես պահանջվում է Կալիֆորնիայի օրենքով:

Հայցեր եւ Վեճեր

Եթե դուք ընդգրկված եք հայցման կամ վեճի մեջ, մենք կարող ենք բացահայտել ձեր առողջության մասին պաշտպանված տեղեկությունները որպես պատասխան դատարանի կամ վարչական կարգի: Մենք կարող ենք նաև բացահայտել պաշտպանված տեղեկությունները ձեր առողջության մասին որպես պատասխան դատական ծանուցագրի, բացահայտման դեպքում հարցումի, կամ ուրիշ մեկի օրինական գործընթացի ժամանակ, որը ներգրավված է վեճի մեջ, բայց միայն եթե ջանքեր են գործադրվել, որպեսզի ձեզ ասվի հարցման մասին, (որը կարող է գրավոր ծանուցումով տեղեկացնել ձեզ) կամ պահանջվող տեղեկատվությունը պաշտպանելու համար հրաման ձեռք բերելու համար:

Իրավապահ Մարմին

Մենք կարող ենք ազատ արձակել պաշտպանված տեղեկություններ առողջության մասին եթե իրավապահ մարմին պաշտոնյան է դա խնդրում՝

- Բացահայտելու կամ տեղորոշելու կասկածյալի, փախստականի, նյութական վկայի կամ անհայտ բացակայող անձի:
- Հանցագործության գոհի մասին, եթե որոշակի սահմանափակ հանգամանքներում մենք չենք կարողանում ստանալ տվյալ մարդու համաձայնությունը:
- Մահի վերաբերյալ, որը մենք կարծում ենք, կարող է լինել քրեական վարքագծի արդյունք:
- Pacific Clinics-ում տեղի ունեցող քրեական վարքագծի մասին:
- Ծայրահեղ հանցագործություն հաղորդելու հանգամանքներում, հանցանքի կամ գոհի գտնվելու վայրը, կամ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, նկարագրությունը, կամ գտնվելու վայրը:

Ազգային Անվտանգության Հետախուզական Գործունեություն

Մենք կարող ենք ազատ արձակել ձեր առողջության մասին պաշտպանված տեղեկություններ լիազոր դաշնային հետախուզական պաշտոնյաներին, հակահետախուզական եւ այլ օրենքով լիազորված ազգային անվտանգության միջոցառումներին:

Նախագահի եւ Այլոց Պաշտպանական Ծառայություններ

Մենք կարող ենք բացահայտել ձեր առողջության մասին պաշտպանված տեղեկություններ լիազորված դաշնային պաշտոնյաների, որպեսզի նրանք կարողանան պաշտպանություն ապահովել նախագահին, եւ այլ օրենքով լիազորված ազգային անվտանգության միջոցառումներին:

Բանտարկյալների Տեղեկություն Արձակել Ուղղիչ Հիմնարկին

Եթե Դուք որեւէ բանտարկյալ ուղղիչ հիմնարկի կալանավոր եք, կամ պաշտոնատար իրավապահ մարմինների բանտարկության տակ եք, մենք կարող ենք

ազատ արձակել Ձեր առողջության մասին պաշտպանված տեղեկությունները ուղղիչ հիմնարկին կամ պաշտոնատար իրավապահ մարմիններին: Այս թողարկումը անհրաժեշտ կլինի՝

- Որպեսզի հաստատությունը Ձեզ առողջապահության տրամադրի:
- Ձեր առողջությունը եւ անվտանգությունը, կամ ուրիշների անվտանգությունը պաշտպանելու համար:
- Ուղղիչ հիմնարկի ապահովության եւ անվտանգության համար:

Առողջապահության Գործունեություն

Մենք կարող ենք բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները հանրային առողջապահության ոլորտին: Մա կարող է ներառել՝

- Հիվանդություն կանխելու կամ վերահսկելու, վնասվածքի կամ հաշմանդամության նպատակով առողջապահական մարմիններին առողջապահական տեղեկատվություն զեկուցելու համար:
- Զգուշացնելու անձին, որը կարող է ենթարկվել մեկ այլ հիվանդության, լուրջ լինել, կամ կարող է լուրջ հիվանդության տարածման կամ վարակվելու վտանգավոր սպառնալիք լինել:

Առողջության Վերահսկիչ Գործունեություն

Մենք կարող ենք բացահայտել Ձեր առողջության պաշտպանված տեղեկատվությունը առողջապահական գործակալությանը, որը վերահսկում է առողջապահական համակարգը եւ պարտավորված է պատասխանատվություն կրել կանոնների համապատասխանությունը ապահովելու առողջապահության ծրագրերին, ինչպիսիք են Medicare եւ Medi-Cal.

Առողջությանը Կամ Անվտանգությանը Լուրջ Սպառնալիք Կանխելը

Մենք կարող ենք օգտագործել եւ բացահայտել առողջության մասին պաշտպանված տեղեկատվությունները, երբ անհրաժեշտ է կանխել լուրջ վտանգ ձեր առողջությանը եւ անվտանգությանը, հասարակության կամ այլ անձի առողջությանը եւ անվտանգությանը: Սակայն ցանկացած բացահայտումը կկատարվի միայն նրան, ով կարող է օգնել կանխել վտանգը:

Դատարնիչ, Բժշկական Քննող, Սգո Տան Ներկայացուցիչ

Մենք կարող ենք բացահայտել Ձեր առողջության մասին պաշտպանված տեղեկատվությունները, որպեսզի որոշվի մահվան պատճառն ու իրականացնել անհրաժեշտ օրենքով լիազորված պարտականությունները:

Առողջության Տեղեկատվության Փոխանակում

Մենք կարող ենք բացահայտել առողջության մասին պաշտպանված էլեկտրոնային տեղեկատվության ձեր մասին « Առողջապահական Տեղեկատվության Փոխանցման » մեջ, որին մենք մասնակցում ենք: Ընդհանրապես, առողջապահական

տեղեկատվական փոխանակումը մի կազմակերպություն է, որի օգնությամբ ռեգիոնալ բուժաշխատողները, ինչպիսիք են մեր գործակալությանները, մասնակցում են առողջության վերաբերյալ պաշտպանված էլեկտրոնային տեղեկությունները այլ բուժաշխատողների հետ փոխանակելու նպատակով, ովքեր ունեն բուժման հարաբերություններ ձեզ հետ, եւ որպեսզի հեշտացվի առողջապահությունը, ծառայությունների կրկնօրինակումից խուսափելը (ինչպիսիք են ախտորոշիչ տեստեր), եւ նվազեցնել բժշկական սխալների հավանականությունը: Առողջական տեղեկատվության փոխանակումը մեր անունից եւ մյուս բուժաշխատողների անունից գործող բիզնես գործակից է, եւ կստանա, կպահպանի կամ կփոխանցի առողջության մասին պաշտպանված էլեկտրոնային տեղեկությունները ձեր բուժման , վճարման եւ առողջապահական գործունեության նպատակներով: Առողջական տեղեկատվության փոխանակումը պահանջում է պաշտպանել էլեկտրոնային բժշկական տեղեկատվության գաղտնիությունը: Ձեր առողջության մասին պաշտպանված էլեկտրոնային տեղեկությունները որ մենք կարող ենք բացահայտել առողջապահական տեղեկատվության փոխանակմանը կարող են լինել զգայուն ախտորոշմներ , ինչպիսիք են ՄԻԱՎ / ՉԻԱՀ - ի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, գենետիկական տեղեկատվության, հոգեկան առողջության, թմրադեղերի կամ արկոհոլի չարաշահման, եւ այլն: Ձեր առողջություն մասին պահպանվող էլեկտրոնային փոխանակումը ըստ Կալիֆորնիայի օրենքի կիրառման, կարող է պահանջել մեզանից ստանալ Ձեր համաձայնությունը նման փոխանակման , կամ ձեզ իրավունք է տալիս հետաձգել կամ սահմանափակել այդ համաձայնությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Pacific Clinics, Attn: Privacy Officer, 171 N. Altadena Dr. Suite 240, Pasadena, CA 91107.

Հետազոտություն

Մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները, եթե մեր Ինստիտուցիոնալ Տեսության Խորհուրդը կամ մարդու օրենքների պաշտպանության խորհուրդը թույլատրում է հրաժարվել լիազորությունից եւ հաստատում է որոշակի գաղտնիությունը ապահովող երաշխիքներ կամ ձեր առողջության վերաբերյալ պահպանվող տեղեկություններ:

Ծայրահեղ Իրավիճակներ

Մենք կարող ենք բացահայտել առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները բժշկական անձնակազմին, բուժելու ծայրահեղ իրավիճակներում, որոնք անմիջական վտանգ են սպառնում եւ պահանջում են անհապաղ բժշկական միջամտություն:

Դրամահավաք Միջոցառումներ

Մենք կարող ենք ձեր մասին տեղեկատվությունները օգտագործել, կամ բացահայտել այդ տեղեկատվությունը Pacific Clinics-ի հետ կապված հիմնադրամին, ձեր հետ կապվելու համար, որպեսզի գումար հավաքվի Pacific Clinics-ի եւ նրա գործողությունների համար: Դուք իրավունք ունեք հեռանալ դրամահավաք կապերից: Եթե դրամահավաքը կապ հաստատաթի Ձեզ հետ, Ձեզ կաավի թե ինչպես պետք է հրժարվել դրանից:

Աշխատողների Փոխհատուցում

Մենք կարող ենք ազատ արձակել Ձեր առողջության մասին պաշտպանված տեղեկությունները աշխատողների փոխհատուցման համար կամ նմանատիպ ծրագրերի: Այս ծրագրերը տրամադրում են նպաստներ աշխատանքի հետ կապված վնասվածքների կամ հիվանդությունների համար:

Ինչպես Պահանջվում է Օրենքով

Մենք կարող ենք օգտագործել եւ բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները, երբ սա պահանջվում է անել որեւէ այլ դաշնային, նահանգային կամ տեղական օրենքով որոնք նշված չեն նախորդ կարգերում:

Pacific Clinics-ը չի բացահայտի առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները որեւէ այլ նպատակով, քան վերը նկարագրված, քանի դեռ դուք մեր բլանկով մեզ գրավոր թույլտվություն չտաք կամ որպես գրավոր հայտարարություն, նախքան որեւէ առողջության վերաբերյալ պահպանվող տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումը:

Pacific Clinics-ը կարող է բացահայտել Ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները , ձեր թույլտվությամբ հետեյալ պայմաններում՝

- Ձեր փաստաբանին, որը ունի համապատասխան թույլտվություն բացահայտելու /օգտագործելու առողջության պաշտպանված տեղեկությունները: Եթե դուք չեք կարողանում ստորագրել , մենք կարող ենք ազատ արձակել գրառումները ձեր փաստաբանին, եթե մենք որոշենք որ փաստաբանը ներկայացնում է ձեր շահերը:
- Ձեր կողմից նշանակված որեւէ մարդու, ում հետ ձեր բուժող անձնակազմը կհամաձայնվի:
- Անձի, որը գրավոր նշանակված է որպես ծնող, խնամակալ կամ պահապան:
- Մասնագիտացված անձի, որը չի աշխատում Clinics-ում, ով չունի ձեր բժշկական կամ հոգեկան առողջության խնամքի պատասխանատվություն:
- Պոտենցիալ գործատուի որակավորված հոգեբուժին, աշխատանքի դիմելու պատճառով, բացառությամբ, եթե ձեր խնամքի մասնագիտացված անձը համարում է որ դա դեմ է ձեր լավագույն շահերին:

- Փորձաշրջանի պետական պաշտոնյաի գնահատման եզրակացման համար, եթե դուք արդեն նախկինում դատապարտված եք եղել հանցագործության համար, սահմանափակված եք եղել հանցանքի, կամ այլապես բուժված եք եղել մեկ այլ հաստատության կողմից:
- Իրավասության բողոքարկման կամ նպաստների որոշմանը դիմելու նպատակով թեկնածուի կամ պետական Զարգացման Ծառայությունների Վարչության (կամ անձի ներկայացուցիչ) ծառայությունների ստացողի:
- Վարչաշրջանի հաճախորդի իրավունքների պաշտպանին, ձեր կամ ինսամակալի գրավոր թույլտվության ներկայացնելուն պես:

Pacific Clinics-ը կարող է բացահայտել ընտանիքի անդամների եւ այլ անձանց Ձեր առողջության պաշտպանված տեղեկատվությունները հետեւյալ հանգամանքներում՝

Մենք կարող ենք բացահայտել Ձեր պաշտպանված առողջության վերաբերյալ տեղեկությունները ընտանիքի անդամի կամ ձեզ կողմից նշանակված (լիազորված) այլ անձի եթե մենք խնդրում ենք ձեզ եւ խորհուրդ ենք տալիս ձեզ ձեր իրավունքը բացահայտելու նման տեղեկություններ: Եթե համաձայն եք , մենք կարող ենք խորհուրդ տալ Ձեր ընտանիքի անդամին կամ լիազորված մեկին ձեր ընդունման, ազատման, տեղափոխման, ծանր հիվանդության կամ վնասվածքի, ախտորոշման, նախագուշակման , դեղորայքի նախատեսվածության եւ դրանց կողմնակի ազդեցությունները (եթե այդպիսիք կան), ձեր ընդհանուր առաջընթացը, կամ աղետի դեպքում: Մենք կբացահայտենք տեղեկատվություններ որոնք մենք հավատում ենք, ուղղակիորեն համապատասխանում են ընտանիքի անդամի կամ լիազորվածի մասնակցությանը ձեր առողջությանը: Դուք կարող եք խորհուրդ տալ մեզ, գրավոր, որ դուք չեք ուզում որպեսզի մենք բացահայտենք այդ տեղեկությունները: Եթե դուք առարկեք, ոչ մի տեղեկատվությունը չի կարող բացահայտվի: Եթե դուք անաշխատունակ եք կամ այլ կերպ չեք կարող համաձայնության գալ տեղեկատվության բացահայտման մասին, ապա մենք սահմանափակված ենք հաստատելու Ձեր ներկայությունը մեր կլինիկայում: Սակայն եթե դուք ստանում եք ծառայություններ ակոհոլի կամ թմրանյութերի չարաշահման համար, դաշնային օրենքը արգելում է ցանկացած բացահայտումը:

Եթե դուք անչափահաս եք, դուք իրավունք ունեք պահանջել, որ որոշակի տեղեկություններ բացահայտվեն ձեր ծնողին կամ ինսամակալին:

«Խիստ Գաղտնի» ԱՊՏ-ի Օգտագործում եւ Հրապարակումը

Որոշակի ԱՊՏ-ի տեսակի համար, դաշնային եւ պետական օրենքը կարող է պահանջել, ուժեղացված գաղտնիության պաշտպանություն: Սա ներառում է տվյալ ԱՊՏերը

- Պահպանված հոգեթերապիայի գրառումներ
- Ալկոհոլի եւ թմրանյութերի չարաշահման կանխարգելման, բուժման, եւ ուղղորդման մասին:

- ՄԻԱՎ / ՁԻԱՀ - ի փորձարկման, ախտորոշման, կամ բուժման.
- Վեներական եւ / կամ վարակիչ հիվանդության (ներ)-ի մասին:
- Գենետիկական փորձաքննության.
- Մենք կարող ենք այս տիպի հատուկ պահպանվող ԱՊՏ բացահայտել միայն ձեր նախօրոք գրավոր թույլտվությամբ, բացառությամբ երբ, մասնավորապես, թույլատրելի է կամ պահանջվում է օրենքով:

Դուք ունեք իրավունք՝

Հարցումով Ստուգել եւ ձեռք բերել ձեր պահպանվող առողջապահական Տեղեկատվության օրինակը

Դուք կարող եք գրավոր խնդրանքով ուսումնասիրել եւ ձեռք բերել ձեր առողջության վերաբերյալ պահպանվող տեղեկությունների օրինակները: Սակայն, մենք պարտավոր չենք ապահովել բոլոր առողջության վերաբերյալ պահպանվող տեղեկությունները որ մենք ունենք: Օրինակ, այս իրավունքը չի տարածվում կազմված տեղեկությունների ակնկալիքով, կամ քաղաքացիական օգտագործման համար, քրեական կամ վարչական վարույթի համար: Թույլտվությունը կարող է մերժվել, եթե բացահայտումը ողջամտորեն կվտանգի Ձեզ կամ այլ անձի:

Ձեր Առողջության Պահպանվող Տեղեկությունների Որոշակի Օգտագործումների եւ Բացահայտումների Ծանուցման Սահմանափակումները

Դուք կարող եք գրավոր դիմում տալ, որը կճանաչի թե ինչպես եք դուք ցանկանում որ Pacific Clinics սահմանափակի առողջապահական պահպանված տեղեկատվությունները բուժման, վճարման եւ առողջապահական գործողությունների օգտագործման եւ բացահայտումների համար: Սակայն, մենք պարտավոր չենք համաձայնել այդ խնդրանքներին: Մենք նվիրված ենք ձեր առողջությանը եւ վստահ ենք, որ մեր բոլոր տեղեկություններն անհրաժեշտ են այդ ոլորտներում արդյունավետ կատարելու:

Դուք կարող եք գրավոր դիմում տալ, որը սահմանափակում կամ արգելում է Pacific Clinics-ին բացահայտել առողջապահական պաշտպանված տեղեկատվությունները Ձեր գտնվելու վայրի, կամ վիճակի մասին ձեր ընկերներին եւ ընտանիքին, կամ այլ դեպքերում, ինչպիսիք են աղետ, կամ աղետոն աջակցող անձին:

Փնտրեք Փոփոխություն Ձեր Առողջության Պահպանվող Տեղեկությունների Համար

Դուք կարող եք գրավոր դիմել ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունների փոփոխության համար: Դուք նաեւ պետք է հաղորդեք Ձեր խնդրած փոփոխության պատշաճ պատճառը: Եթե մենք չհամաձայնվենք փոփոխության հայցին, մենք թույլ կտանք Ձեզ ներառել հայտարարություն, որով դուք չեք համաձայնվում մերժմանը: Ավելին՝ մենք կտրամադրենք Ձեզ մերժման

պատճառների գրավոր բացատրությունը եւ կներկայացնենք համապատասխան դիմումների եւ բողոքների լրացման ընթացակարգերը:

Կատարել Բողոք

Եթե դուք ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ Ձեր անձնական անձեռնմխելիության իրավունքների մասին, կամ մտահոգված եք որ մենք խախտել ենք ձեր իրավունքների գաղտնիությունը, կամ համաձայն չեք ձեր առողջապահական պաշտպանված տեղեկությունների հասանելիության մեր որոշման հետ, ապա կարող եք դիմել մեր Գաղտնիության Քրասենյակ (626) 316-7637 հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև դիմել գրավոր բողոքով գրասենյակի տնօրենին, Office of Civil Rights of the U.S. Department of Health and Human Services Region IX, 50 United Nations Plaza, Room 322, San Francisco, CA 94102: Կամ զանգահարել (415)437-8310, TDD (415) 437-8311: Մենք չենք դիմի հակադարձ քայլերի ձեր դեմ, եթե դուք դիմեք մեզ, կամ տնօրեն HHS-ի տնօրենին:

Ստանալ Ձեր Առողջության Պահպանվող Տեղեկատվությանն Բացահայտումների Հաշվառումը

Դուք կարող եք գրավոր դիմում ներկայացնել առողջապահության պահպանվող տեղեկատվության բացահայտումների հաշվառման համար, Ձեր պահանջի օրվանից եւս վեց (6) տարի առաջվա համար: Այս հաշվառումները չեն ներառի՝ բուժման բացահայտումներ, վճարման կամ առողջապահական գործողություններ, եւ Ձեզ վրա, ձեր համաձայնությամբ բացահայտումներ, թույլտվություններ կամ այլ միջոցներ թույլատրված Գաղտնիության Կանոնակարգերով, բացահայտումներ ձեր խնամքի կամ բացահայտումների ընդգրկված անձանց հետ, որոնք տեղի են ունեցել մինչեւ ապրիլի 14 - , 2003 թ.: Ձեր ամեն տարվա առաջին դիմումը ձեր է:

Լիազորությունը Չեզոքացնել

Դուք կարող եք գրավոր դիմում ներկայացնել չեզոքացնելու ձեր առողջության վերաբերյալ պահպանված տեղեկությունները օգտագործման կամ բացահայտման լիազորությունը: Մակայն նման գրկումը չի ունենա որեւէ ազդեցություն գրկումը ստանալուց արաջ ներկայացված բացահայտումները:

Գաղտնի Կապ Ստանալու Իրավունք

Դուք կարող եք պահանջել, եւ մենք պետք է հարմարեցնենք, որեւէ ողջամիտ գրավոր դիմում, որպեսզի դուք ստանաք ձեր առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները այլընտրանքային միջոցներով կամ այլընտրանքային վայրերում: Pacific Clinics-ը պետք է ապահովի, որ ցանկացած խնդրանքի մեթոդ պետք է համահունչ լինի ընթացիկ առողջության պաշտպանված տեղեկությունների գաղտնիությունը եւ/կամ անվտանգության չափանիշներին: Օրինակ, դուք կարող եք մեզ խնդրել վոր մենք կապնվենք ձեր հետ միայն

աշխատանքի վայրում կամ էլեկտրոնային փոստով: Ձեր հարցումը պետք է նշի թե ինչպես եք դուք ցանկանում որ մենք ձեզ դիմենք:

Այս Ծանուցման Թղթե Պատճենը Ունենալու Իրավունքը

Դուք ունեք այս ծանուցման թղթե պատճենը ունենալու իրավունքը: Դուք կարող եք մեզնից ստանալ այս ծանուցման օրինակը ցանկացած ժամանակ: Նույնիսկ եթե դուք համաձայնել եք ստանալ այս ծանուցումը էլեկտրոնային եղանակով, դուք դեռ իրավունք ունեք այս ծանուցման թղթի պատճենի: Դուք կարող եք ձեռք բերել այս ծանուցման մի օրինակ մեր կայքում: www.pacificclinics.org այս ծանուցման թղթե պատճենը ձեռք բերելու համար ուղարկել գրավոր դիմում : Pacific Clinics Attn: Privacy Officer, 171 N. Altadena Dr., Suite 240, Pasadena CA 91107.

Պահպանվող Առողջապահական Տեղեկությունների Այլ Օգտագործում

Առողջության վերաբերյալ պահպանվող տեղեկությունների օգտագործումները եւ բացահայտումները, որոնք չեն ընդգրկված այս ծանուցման մեջ կամ օրենքներում, որ վերաբերում են մեզ, կկատարվի միայն Ձեր գրավոր թույլտվությամբ: Դուք կարող եք չեզոքացնել այս գրավոր թույլտվությունը, գրավոր ձեռով ցանկացած ժամանակ: Դուք հասկանում եք, որ մենք չենք կարողանում ետ վերցնել որեւէ բացահայտումներ, որոնք մենք արդեն կատարել ենք ձեր թույլտվությամբ, եւ որ մենք պարտավոր ենք պահպանել մեր բժշկական խնամքի փաստաթղթերը, ըստ մեր Pacific Clinics քաղաքականության եւ ընթացակարգերի համաձայն:

Pacific Clinic-ի՝ Այս Ծանուցման Պայմանները Փոխելու Իրավունքը

Pacific Clinics-ը իրավունք է վերապահում փոփոխելու սույն ծանուցման պայմանները ցանկացած ժամանակ: Եթե մենք փոխենք այս ծանուցման պայմանները, նոր ծանուցումը արդյունավետ կլինի Clinics-ի պահպանված ողջ առողջության վերաբերյալ պաշտպանված տեղեկությունները, որոնք ստեղծվել կամ ստացվել են մինչեւ նոր ծանուցումը տալը: Ցանկացած նոր ծանուցում կտեղադրվի նաեւ Clinics սպասասրհաներում եւ մեր ինտերնետային կայքում www.pacificclinics.org . Դուք նաեւ կարող եք ձեռք բերել որեւէ նոր ծանուցում դիմելով Գաղտնիության Գրասենյակին, ներքոհիշյալ հասցեով՝

**Pacific Clinics Privacy Office
171 N. Altadena Dr. Suite 240
Pasadena, CA 91107
Telephone Number: (626) 316-7637**



Գործելակերպի Գաղտնիության Ծանուցման Անդորրագիր

Ընդունվել է նոր դաշնային գաղտնիության օրենք, որը պահանջում է որպեսզի մենք մեր գաղտնիության պրակտիկան հասանելի դարցնենք մեր բոլոր հաճախորդների վերանայմանը: Ձեր ստորագրությունը հաստատում է, որ մեր Գործելակերպերի Գաղտնիության Ծանուցումը այսօր տրամադրվել է ձեզ:

Հաճախորդի Ստորագրություն՝ _____

Ներկայացուցչի Ստորագրություն՝ _____

Ազգակցական Կապը Հաճախորդի Հետ՝ _____

Ամսաթիվ՝ _____

Վայրը՝ _____

Անուն՝

MIS: